# Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, դեպուտատ Ս. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ելույթը*

Վերջին ամիսներին հանրապետությունում և ամբողջ ռեգիոնում ստեղծված ծանր կացությունն էլ ավելի է բարդացել: Մեր ժողովուրդն ապրում է իր պատմության թերևս ամենադրամատիկ ու դժվարին պահերից մեկը: Ֆիզիկական ցավը, հոգևոր անավոր խռովքը փոխել են յուրաքանչյուր հայի կյանքի բնականոն ընթացքը, ալեկոծել մեր առօրյան:

Զթությունն այսօր վերածվել է լուրջ տագնապի:

Հայաստանի և Ադրբեջանի միջև լարվածությունը հասել է բարձրակետին: Երկու ժողովուրդների օտարացումը վերաճել է առճակատման: Կոնֆլիկտի մեջ ներգրավված են միլիոնավոր մարդիկ: Ադրբեջանից սկիզբ առած փախստականների երրորդ ալիքը հանրապետությունում նորից բորբոքել է մարդկանց: Մեզ պատմագրում են լարման, իրարդության սասսկացման, ազգամիջյան գժտության, առճակատման նորանոր առիթներ: Ամեն պահ կարող է նոր դի ունենալ անուղղելիորեն: Ճշգմեծությամբ անհասկանալի պետք է հաղթահարվի:

Պետք է շիտակ ասել, որ առճակատումը, կիրքորոշումների անհաշտելիությունը, փոխզիջման մերժումը ստեղծել են մի վիճակ, որը դժվարացնում է կոնստրուկտիվ ուղիների որոնումը: Դրա համար էլ այսօր գլխավոր խնդիրը պետք է լինի ըստ ամենայնի նպաստել այնպիսի իրադրության ստեղծմանը, որը թույլ կտար Խորհրդային Միության Գերագույն խորհրդին օբյեկտիվորեն քննել Արցախի պրոբլեմը և կայացնել իրավիճակի լիցքաթափմանն ուղղված վճիռներ:

Իրադարձություններն ընտանում են սպառնալի ընթացք: Ձեռնարկվել է մեր սոցիալիստական հասարակությանը և իրավակարգին անհարիր ակցիա՝ Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կողմից ենթարկվել են շրջափակման: Արդեն երկրորդ ամիսն է, ինչ Հայաստանն իսպառ դադարել է վառելանյութ և այլ ժողովրդատնտեսական բեռներ ստանալ ադրբեջանական երկաթուղով: Սպառվում են հիմնական նյութական միջոցների պաշարները: Փաստորեն դադարեցված են շինարարական ու վերականգնման աշխատանքներն աղետի գոտում: Կատաղյալ ձախողման եզրին է արդյունաբերական ձեռնարկությունների կողմից պետական պատվերների կատարումը:

Նման իրավիճակում դժվար է պատասխան գտնել այն հարցին, թե ինչպե՞ս կարելի է միասնական, սոցիալիստական պետության մեջ, գործող սահմանադրության պայմաններում, անպատիժ ձևով թույլ տալ վիճակի նման բարդացում, ընդհուպ մոտենալ ամենավտանգավոր եզրագծին:

Ժողովուրդն արդարացի ու վճռական բոլոր է հայտնում շրջափակման դեմ, ամեն տեսակ ճնշման դեմ, որ հետապնդում է մեկ նպատակ՝ փակուղի տանել Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը: Կատարելով ժողովրդի կամքը, հանրապետության ղեկավարությունը պահանջել է ձեռնարկել անհետաձգելի և արտակարգ միջոցներ տրանսպորտում, հատկապես երկաթուղում, օրինականություն ու կարգուկանոն հաստատելու, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի շրջափակումը վերացնելու համար:

Մեր կողմից հարց է բարձրացվել երկրի քաղաքացիական և ռազմատրանսպորտային ավիացիայի, հատուկ ավտոշարասյուների միջոցով կուտակված բեռները, այդ թվում երկրաշարժի գոտու համար նախատեսված սենդամթերքը, շինարարական նյութերը և տեխնիկան շտապ կերպով հանրապետություն հասցնելու վերաբերյալ:

Իսկապես, դժվար, շատ դրժվար է նման իրավիճակում զսպել զգացմունքների տարերքը: Սակայն նույնիսկ այս պայմաններում մեր ժողովուրդը չի կորցնում հավասարակշռությունը, ողջամտությունը, զգաստությունը, տուրք չի տալիս հույզերին, կրքերին, բացահայտ ու թաքուն սադրանքներին:

Շատ են կուտակված պրոբլեմները: Բայց այսօր դրանցից առանձնանում են մի քանիսը, որոնք հապաղում չեն հանդուրժում, պահանջում են ամենաառաջահերթ ուշադրություն. ազգային հարց, երկրաշարժի հետևանքների վերացում, փախստականների հետ կապված խնդիրներ, տրանսպորտային շրջափակման ու դրա հետևանքների հաղթահարում, Արցախի և Ադրբեջանի հայ ազգաբնակչության անվտանգության երաշխիքների ապահովում, մեր բոլոր ուժերի միասին ու համագործակցված նպատակամղում վերածնության համազգային ծրագրի իրականացմանը:

Սեպտեմբերի 19-ին կայացող է կուսակցության Կենտրոնական կոմիտեի պլենումը՝ նվիրված ազգային հարցին, այնուհետև ասաց Ս. Գ. Հարությունյանը: Մենք պլենում ենք գնում հստակ ծրագրով, որը անցել է բազմաթիվ կոնսուլտացիաների, քննարկումների բովով, մշակվել է հասարակագետների, իրավաբանների, հասարակությունում ներկայացուցիչների ակտիվ մասնակցությամբ, մասսայական ինքնրմացիայի միջոցներում հրապարակված առաջարկությունների, դիտողությունների, նկատառումների հիման վրա:

Կցանկանայի ձեզ ներկայացնել ազգային հարցի վերաբերյալ մեր դիրքորոշման հիմնական դրույթներից մի քանիսը: Այսօր մենք կանգնած ենք ազգային քաղաքականության արմատական վերանայման անհրաժեշտության առջև: Իրադրությունը երկրում փոխվել է, ազգերի ու ժողովուրդների փոխհարաբերություններն այսօր պետք է կառուցվեն նորովի: Դրան են նպատակաուղղված նաև ազգային հարցի մասին կուսակցության պլատֆորմի նախագծում առաջադրված շատ դրույթներ:

Խորհրդային ֆեդերացիայում արմատական փոփոխությունների հիմնական առանցքը պետք է դառնա ամենից առաջ բոլոր մեծաթիվ ու փոքրաթիվ ազգերի ու ազգությունների իրական հավասարության հաստատումը: Բոլոր ազգային ինքնավարությունները պետք է դառնան ֆեդերացիայի իրավահավասար անդամներ: Ազգերի ազատ ինքնորոշումը մարդկության քաղաքակրթության ամենամեծ նվաճումներից է և յուրաքանչյուր քաղաքակրթ երկրի սահմանադրական հարաբերությունների հիմքը պետք է լինի:

Մեր կարծիքով, անհրաժեշտ է ճանաչել ինքնավար կազմավորումների իրավունքը, ազատ կերպով դուրս գալու մի միութենական հանրապետության կազմից և մտնելու այլ հանրապետության կազմի մեջ՝ որպես ազգերի ինքնորոշման լենինյան սկզբունքի արտահայտություն: Ազգերի ինքնորոշման իրավունքը հարկ է մեկնաբանել ոչ միայն Միության կազմից այս կամ այն հանրապետության դուրս գալու, այլև խորհրդային ֆեդերացիայի շրջանակներում ժողովուրդների ինքնորոշման առումով:

Արդյոք տարօրինակ չէ՞ այն իրողությունը, որ ինքնավար մարզը կամ հանրապետությունը չի կարող փոխել այս կամ այն միութենական հանրապետության իր պատկանելությունը, այն դեպքում, երբ վերջինս ունի ինքնորոշման լայն իրավունքներ, ընդհուպ մինչև Խորհրդային Միության կազմից դուրս գալը, փաստորեն «իր հետ տանելով» նաև իր կազմի մեջ մտնող ազգային ինքնավարությունն, անկախ նրա կամքից:

Նման իրավիճակին մեր մոտեցումն այն է, որ հստակորեն մշակվի այդպիսի կընճռոտ խնդիրների լուծումն ապահովող իրավական մեխանիզմ, որի առանցքը պետք է կազմի ազգերի ազատ ինքնորոշման և իրավահավասարության սկզբունքի իրացման ռեալ նախադրյալների ստեղծումը:

Ցանկանանք դա, թե ոչ, ազգամիջյան կոնֆլիկտները այսօր ռեալ իրողություն են: Իսկ բարդությունն այն է, որ մեզանում չկան դրանց հարթման իրավական մեխանիզմներ: Առաջին և հիմնական խնդիրը այստեղ սահմանադրության վերանայումն է՝ նաև այս առումով:

Որպես ազգամիջյան սուր կոնֆլիկտների լուծման ձև առաջարկվում է այնպիսի կազմավորումների կողքին, որպիսիք են ինքնավար հանրապետությունը, ինքնավար մարզը, օկրուգը, երկրի սահմանադրության մեջ նախատեսել միութենական ենթակայության ինքնավար տերիտորիայի ստատուսը:

Նման լուծումները թույլ կընտան ինչ-որ տեղ շտկել անցյալի սխալներն ու կամայականությունները, ժողովուրդների պատմական ճակատագրի բռնի սրբագրումները, ազգային քաղաքականության մեջ տեղի ունեցած մլուս ձևախեղումները, որոնք խտացել են Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի մեջ:

Մեր մոտեցումներում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում ռեգիոնում իրավիճակի կայունացման ուղիների որոնումը, որն ամենից առաջ կապված է արցախյան պրոբլեմի լուծման հետ: 1988 թվականի փետրվարից հետո Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում տեղի են ունեցել պրոցեսներ, որոնք ստեղծել են քաղաքական, տնտեսական, սոցիալական, բարոյական, հոգևոր ու մշակութային բոլորովին նոր իրավիճակ: Արցախի ժողովրդի ազգային ինքնագիտակցությունն այսօր ստացել է նոր որակ: Հաշվի չնստել կատարված փաստի հետ, նշանակում է դեմ գնալ բանականությանը և բարի կամքին:

Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի արդարացի լուծումը մարդի բնիկ հայ ազգաբնակչությունը տեսնում է Հայաստանի հետ նրա վերամիավորման մեջ: Մեզ մոտ, հանրապետությունում նույնպես համաժողովրդական գաղափար է դարձել այդ համոզմունքը: Սակայն, նկատի ունենալով ընտեղծված իրավիճակը, մենք հասկանում ենք, որ այսպիսի մոտեցումն այժմ իրական չէ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է փոխզիջողական լուծում՝ ինքնավար մարզը դուրս բերելով կենտրոնի ենթակայության:

Առաջահերթ խնդիր է ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի և նրա գործադիր կոմիտեի լիազորությունների վերականգնումը, նրանց դնելով պետական իշխանության միութենական մարմինների ենթակայության տակ: Անհրաժեշտ է վերականգնել նաև կուսակցության մարզային կոմիտեի լիազորությունները, այն անմիջականորեն ենթարկելով ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտեին:

Ի դեպ, էքստրեմալ պայմաններում ստեղծված Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը նպատակ ունի համակողմանիորեն նպաստել իրավիճակի կայունացմանը և խորհրդային իշխանության մարզային մարմինների վերականգնմանը:

Այսօր օբյեկտիվ անհրաժեշտություն է Լեռնային Ղարաբաղի հատուկ կառավարման կոմիտեին օժտել արտակարգ լիազորություններով, մշակել կոմիտեի իրավական ազնկասի ստատուս, որը կապահովի նրա ենթակայությունը բացառապես միութենական մարմիններին:

Մի կարևոր պրոբլեմի մասին ևս, որ խորապես հուզում է բոլորիս: Պրոբլեմ, որ իր էությամբ վայրի է և խորթ մեր հասարակությանը: Ավելի քան 200 հազար հայրենակիցներ հարկադրաբար լքելով Ադրբեջանի իրենց մշտական բնակավայրերը, տեղափոխվել են Հայաստան: Մեծ մասամբ դրանք հուսահատ ու վշտաբեկ մարդիկ են, ովքեր բարոյական ու նյութական աջակցության հսկայական կարիք ունեն: Հանրապետությունում մեծ ջանքեր են ներդրվում, որպեսզի մեր հայրենակիցները հարազատ հողում իրենց չզգան սոցիալապես չշաշտպանված, իրավունքներ և պարտականություններ չունեցող մարդիկ: Մենք գտնում ենք, որ անհապաղ պետք է վերակազմել նրանց քաղաքացիական իրավունքները, փոխհատուցել պատճառված նյութական վնասը, սկզբունքորեն լուծել բնակարանով և աշխատանքով ապահովելու պրոբլեմը:

Մի խոսքով, ընկերներ, մենք պետք է ձեռնարկենք առավել կոնկրետ քայլեր այս ուղղությամբ, դա դիտելով որպես ամենալուրջ քաղաքական խնդիր:

Այսօր մեզ լրջորեն մտահոգում է Ադրբեջանում և մասնավորապես Բաքվում մնացած հայ ազգաբնակչության վիճակը: Մենք դիմել ենք Միության Գերագույն խորհրդին՝ անհապաղ միջոցներ ձեռնարկելու մեր հայրենակիցների անվտանգության երաշխիքներ ապահովելու համար:

Ստեղծված կացության վերաբերյալ մեր ճնշաշրջանը բնականաբար պետք է արտահայտի իր դիրքորոշումը և դիմելով Խորհրդային Միության Գերագույն խորհրդին՝ հանրապետության և Արցախի շրջափակումը դադարեցնելու, մարդկանց անվտանգության կայուն երաշխիքներ ապահովելու, իրադրության հետագա սրմանը նպաստող գործողությունները արգելելու անհապաղ միջոցներ ձեռնարկելու համար:

Ելույթ ունեցողն ընդգծեց, որ որքան էլ ծանր ու դժվարին լինի հասարակական- քաղաքական իրադրությունը հանրապետությունում, միևնույնն է մենք ոչ մի լուրջ արդյունքի չենք կարող հասնել առանց էկոնոմիկան խոր ճգնաժամից դուրս բերելու: Մեր հնարավորությունների առավելագույն օգտագործմամբ պետք է լուծենք ոչ միայն քաղաքական էկոնոմիկայի վերականգնման, այլև հանրապետության վերածնման խնդիրը:

Լրջորեն պետք է զբաղվել էկոնոմիկայի կառուցվածքային ու տեխնոլոգիական նորացմամբ, հատուկ ծրագիր իրականացնել շատ արտադրությունների վերապրոֆիլավորման, էկոլոգիապես անաղարտ միջավայր ունենալու ուղղությամբ:

Առանց հստակ ու կշռադատված ստրատեգիայի մենք չենք կարող արդյունավետ լուծել նաև այսօրվա խնդիրները: Այս հարցերին ավելի մեծ ուշադրություն պետք է նվիրել, արդյունավետ օգտագործելով հանրապետության բոլոր ուժերը, Միության լավագույն մասնագետներին:

Որքան էլ էքստրեմալ ու արտակարգ լինի իրավիճակը, այսօր ոչնչով չի արդարացվում հանրապետության տնտեսական ինքնուրույնության, տերիտորիալ տնտեսաշվարկի ու ինքնակառավարման կոնցեպցիայի մշակման, ինչպես նաև այդ հարցի վերաբերյալ Գերագույն խորհրդի համապատասխան օրենսդրական ակտի ընդունման ձգձգումը:

Չպետք է հապաղել ազատ ձեռնարկչության քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելու գործում:

Ստեղծված արտակարգ իրավիճակը պահանջում է լուծել վերականգնման և վերածնման երկմիասնական խնդիրը, որը հնարավոր է միայն բոլորի ջանքերի միաձույմամբ, պետական կառավարման մարմինների, մտավորականության, հասարակական, ոչ պաշտոնական կազմակերպությունների ու շարժումների համատեղ ուժերով:

Դուրս բերել քայքայված էկոնոմիկան ծանր վիճակից՝ գերդժվար խնդիր է նույնիսկ սովորական պայմաններում: Առավել ևս մեր ներկա վիճակում դա հնարավոր է միայն ազգային վերածնության գաղափարի ու կոնկրետ ծրագրի շուրջ ուժերը համախմբելով:

Մենք պետք է բաց գիտակցենք, որ կանգնած ենք լուրջ երկընտրանքի առաջ. կամ ազգային վերածնունդ, կամ ֆիզիկական ավերածություններին կավելանա նաև բարոյական անկումը: Փրկությունը միայն ու միայն համախմբվածության ու միաբանության մեջ է: Մեզ պետք է միավորեն հայրենի օջախը, պատմական ճակատագիրը, ծանր իրավիճակում հաղտնված հայրենիքը, պատասխանատվությունը ապագայի հանդեպ:

Այսօրվա վիճակում մեր ժողովրդը ուժերի ջլատման ոչ մի իրավունք չունի: Մեր ուսերին ծանրացած բեռը միայն ազգովի, համախմբված կարող ենք տանել:

Դա բոլորովին չի նշանակում, թե մենք դեմ ենք մտքերի պլուրալիզմին, կոնստրուկտիվ ու գործնական երկխոսությանը: Այսօր այն խիստ անհրաժեշտ է: Սակայն դեմոկրատացման պրոցեսները ոչ մի դեպքում չպետք է խարխլեն մեր ժողովրդի միասնության հիմքերը: Մի քանի տասնյակ, հաճախ նաև առճակատվող ոչ ֆորմալ խմբերի գոյությունը, հարաբերությունների անհարկի սրումը, ժողովրդին իշխանություններից խորթացնելու փորձերը մեզ ոչ մի օգուտ չեն բերի: Ժամանակի հրամայական պահանջն է ազգի համախմբումը որպես մեկ միասնական բռունցք, յուրաքանչյուրին վերածնման դժվարին պրոցեսի ակտիվ մասնակից դարձնելը:

Մեր ժողովուրդը գոյատևել է, անցնելով պատմական մեծ փորձությունների ու կորուստների միջով: Անցել է շնորհիվ հոգու արիության, տոկունության և այն մեծ հավատի, որ տածել է իր գալիքի նկատմամբ: Դրանց պետք է ապավինենք նաև այսօր:

(Տպագրվում է շարունակությունը)